ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 59 -Լ

ՀՐԱԶԳԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) կազմավորել հրաձգարանի գործարկման լիցենզավորող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) հետևյալ կազմով՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության թույլտվությունների և լիցենզավորման բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ).

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության թույլտվությունների և լիցենզավորման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ).

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության ծառայությունների որակի գնահատման բաժնի պետ.

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ծառայության վարչության պետի տեղակալ.

5) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության օպերատիվ-վերլուծական վարչության օպերատիվ-հետախուզության գործունեության բաժնի պետ.

6) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության գլխավոր վարչության հետախուզման, անօրինական միգրացիայի և ահաբեկչության դեմ պայքարի վարչության ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարի բաժնի պետ.

7) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության թույլտվությունների և լիցենզավորման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հրաձգարանի գործարկման լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ***Ա.ՍԱՐԳՍՅԱՆ***

«27» 08 2024թ.

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
2024թ. օգոստոսի 27-ի թիվ 59-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԳԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանձնաժողովը ստեղծվում և դրա կազմը փոփոխվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ լիցենզավորող մարմնի ղեկավար) հրամանով:

2. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության հիման վրա:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետության տարածքում «Լիցենզավորման մասին» օրենքով վերապահված լիազորությունների սահմաններում հրաձգարանի գործարկման լիցենզավորման գործընթացի իրականացման ապահովումն է:

4. Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) լիցենզիա տալու, լիցենզիա ստանալու հայտը մերժելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություն է ներկայացում լիցենզավորող մարմնի ղեկավարին.

2) առաջարկություններ է ներկայացնում լիցենզավորման բնագավառի օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

3) «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված այլ գործառույթներ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովը հարցերը քննարկում է նիստերում, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

6. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հօգուտ հայտատուի (այսուհետ՝ հրավիրված անձ):

8. Հարցերի քննարկման մասին հրավիրված անձին պատշաճ ձևով հայտնվում է քննարկումից ոչ ուշ, քան յոթ օր առաջ՝ տեղեկացնելով նրան քննարկվող հարցի, քննարկման վայրի (հասցեի), օրվա և ժամի մասին:

9. Հանձնաժողովն իր հերթական նիստի վայրի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին տեղեկատվությունը հրապարակում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am հասցեով՝ նիստի օրվանից ոչ ուշ, քան հինգ օր առաջ:

10. Հարցերի քննարկմանը հրավիրված անձանց նիստին չմասնակցելը հիմք չի հանդիսանում հարցերը չքննարկելու կամ այն մերժելու համար, եթե հրավիրված անձը չի ներկայացրել իր հարցի քննարկումն այլ ժամկետում անցկացնելու գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) դիմում: Հրավիրված անձի գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) դիմումը, իր հարցի քննարկումն այլ ժամկետում անցկացնելու վերաբերյալ, կարող է բավարարվել, եթե նա քննարկմանը չի կարող մասնակցել հարգելի պատճառով, և եթե քննարկման հետաձգմամբ չեն խախտվի օրենքով նախատեսված քննարկման ժամկետները:

11. Հանձնաժողովի նախագահը նիստի ժամանակ ներկայացնում է հրավիրված անձանց, հրապարակում է քննարկվող հարցերը, հարցերի քննարկմանը մասնակցող անձանց բացատրում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, հրապարակում է հայտերի, ինչպես նաև՝ քննարկվող այլ փաստաթղթերի բովանդակությունը:

12. Հրավիրված անձն իրավունք ունի քննարկմանը մասնակից դարձնել մասնագետի,

փորձագետի, աուդիտորի, իրավաբանի կամ թարգմանչի, ովքեր իրավունք ունեն ելույթներ ունենալ, պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին, ներկայացնել միջնորդություններ:

13. Հարցերի քննարկումները կատարվում են դռնբաց: Դռնփակ են քննարկվում այն հարցերը, որոնք վերաբերում են պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններին:

14. Հրավիրված անձի պահանջով քննարկումը կարող է կատարվել դռնփակ, եթե հարցերի քննարկման ժամանակ բացահայտվելու են առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

15. Դռնբաց քննարկումներին կարող են մասնակցել լրագրողներ, մասնագետներ, պաշտոնատար և այլ անձինք:

16. Հանձնաժողովի որոշումը կայացվում է հարցի քննարկման ավարտից հետո առանձին սենյակում՝ դռնփակ: Հանձնաժողովի կողմից որոշման կայացման ժամանակ տվյալ սենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները:

17. Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում է http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և պատշաճ ձևով հանձնվում կամ ուղարկվում հրավիրված անձին:

18. Հանձնաժողովի եզրակացությունն այն կայացնելու օրը հանձնվում է լիցենզավորող մարմնի ղեկավարին: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա լիազորված մարմինը պարտավոր է եզրակացությունը կայացնելուն հաջորդող երկու օրվա ընթացքում կայացնել որոշում: Եթե նշված ժամկետում որոշում չի կայացվում, ապա լիազորված մարմնի որոշումը համարվում է հանձնաժողովի որոշումը, բացառությամբ «Լիցենզավորման մասին» օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

19. Հանձնաժողովում հարցերի քննարկման ժամանակ կազմվում է արձանագրություն, որում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և վայրը.

2) հանձնաժողովի տեսակը և կազմը.

3) քննարկվող հարցերի բովանդակությունը.

4) տեղեկություններ քննարկմանը մասնակցող անձանց մասին.

5) հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց

միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները.

6) հարցի քննարկման ընթացքում հետազոտված փաստաթղթերը և այլ ապացույցները.

7) հանձնաժողովի եզրակացության բովանդակությունը.

8) տեղեկություններ՝ ընդունված եզրակացության հրապարակման մասին:

20. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը:

21. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք.

2) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները և վերահսկողություն իրականացնում հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ուղղությամբ.

3) ստորագրում է հանձնաժողովի եզրակացությունները, նիստերի արձանագրությունները և դրանց վերաբերյալ այլ փաստաթղթեր ու գրություններ.

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

22. Հանձնաժողովի նախագահի տեղակալը հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա պարտականությունները:

23. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի հերթական նիստի անցկացման վայրի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին՝ նիստի օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ.

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

4) մշակում և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում անհրաժեշտ նյութեր ու ընթացիկ տեղեկություններ, նախապատրաստում է առաջարկություններ դրանց վերաբերյալ.

5) կազմում է հանձնաժողովի եզրակացությունները և կազմակերպում դրանց հրապարակումը.

6) հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ զեկուցում է հանձնաժողովի նախագահին:

24. Հանձնաժողովի նիստում քննարկման ներկայացված նյութերը նիստի ավարտից հետո պահպանվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

25. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ստանձնում է հանձնաժողովի անդամներից մեկը:

26. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, հանձնաժողովի աշխատանքային պլանների մշակմանը և դրանց իրականացման հետ կապված աշխատանքներին.

2) հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

27. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

28. Հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերը և նյութերը ենթակա են պահպանման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: